

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ
ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ_ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչություն Հ.Պապոյան

Ֆինանսատնտեսագիտական բաժին Ն.Ասրյան (6 մասնագետ)

իրականացնում է բաժնի գործառույթների համակարգման և ամփոփման աշխատանքները, ամենօրյա հսկողություն համայնքների եկամուտների կատարման նկատմամբ, սպասարկում է Ստեփանավանի տարածաշրջանի և Թումանյանի տարածաշրջանի համայնքներին

գլխավոր մասնագետ Դավիթ Թամարյան Սպասարկում է Սպիտակի տարածաշրջանի համայնքներին, նաև գնումների համակարգողն է և իրականացնում է գնումների գործընթացին առընչվող գործառույթները

առաջատար մասնագետ Մուշեղ Գրիգորյան Սպասարկում է Գուգարքի տարածաշրջանի և Թումանյանի տարածաշրջանի համայնքներին, կազմակերպում է հողի հարկի և գույքահարկի անդորրագրերի ստացումն ու բաշխումը

առաջատար մասնագետ Լուսինե Պապյան Սպասարկում է Տաշիրի տարածաշրջանի համայնքների և Թումանյանի տարածաշրջանի համայնքներին

առաջատար մասնագետ Քրիստինե Հովսեփյան մասնակցում է գնումների գործընթացին առընչվող աշխատանքներին և վարչական վերահսկողության աշխատանքներին

կրտսեր մասնագետ Սուսաննա Հարությունյան իրականացնում է մարզպետարանի հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի վարման, տեղեկատվության մշակման աշխատանքներ

Հաշվապահական հաշվառման բաժին Ա.Բեջանյան (7 մասնագետ, 1 պայմանագրային աշխատող)

համակարգում է մարզպետարանի հաշվ.հաշվառման վարման, կրթության և մշակույթի ոլորտի ֆինանսավորման, առողջապահական ոլորտի ֆինանսատնտեսական վերահսկման, սոց. փաթեթի վարման և վարչական հսկողության աշխատանքները

գլխավոր մասնագետ Շուշանիկ Ճմարիտյան մարզպետարանի ապարատի ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, հաշվ. հաշվառման վարում, հաշվետվությունների կազմում

առաջատար մասնագետ Ժամենա Գրիգորյան Կրթության ոլորտի կազմ. ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, վերահսկողություն և համակարգում

առաջատար մասնագետ Անուշ Խաչիկյան Կրթության ոլորտի կազմ. ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, վերահսկողություն և համակարգում,

առաջատար մասնագետ Անուշ Քառյան Առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտի վերահսկողություն և համակարգում,

կրտսեր մասնագետ Արմինե Առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտի վերահսկողություն և համակարգում,

առաջատար մասնագետ Նաիրա Սարգսյան Մարզպետարանի ապարատի ֆինանսատնտեսական գործունեության ապահովում , գանձապահի պարտականքների կատարում

պայմանագրային աշխատող Տարոն Մարտիրոսյան Սոցիալական փաթեթի գծով անհրաժեշտ աշխատանքների իրականացում, գույքագրման փաստաթղթերի ընդունում

Վարչության խնդիրն է

Ֆինանսների և սոցիալ-տնտեսական միասնական քաղաքականության ձևավորման բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ մարզպետին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման ապահովումը:

Վարչության համար որպես աշխատանքների հիմք հանդիսացել է „ՀՀ Լոռու մարզի 2017-2020թթ. Սոցիալ-տնտեսական զարգացման և վարչության 2017թ. աշխատանքային ծրագրերը:

Վարչության գործառույթների իրականացումն ըստ բաժինների

Ֆինանսատնտեսագիտական բաժնի կողմից իրականացվել են հետևյալ գործառնությունները

1. Մարզի համայնքների բյուջեների կատարման և բյուջետային գործընթացի վերահսկողություն, բյուջեների կազմման ուղղությամբ մեթոդական օգնության ցուցաբերում
2. Համայնքների բյուջեների կատարման, ՏԻՄ-երի և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների, ՀՈԱԿ-ների վերաբերյալ հաշվետվությունների և հաղորդումների ընդունում, ստուգում, ամփոփում, համայնքների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ ամենօրյա տեղեկատվության մշակում և ներկայացում մարզպետին, փոխմարզպետներին և ՏԻՄ վարչությանը
3. Մարզպետարանի հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի վարում, տեղեկատվության մշակում
4. Պետական բյուջեից տրամադրվող ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիայի ելակետային տվյալների, սուբվենցիաների ծրագրերի ամփոփում և ներկայացում
5. Մարզպետարանի աշխատակազմի գնումների գործընթացի կազմակերպում, ինչպես նաև համայնքների և ՊՈԱԿ-ների գնումների գործընթացի աջակցում
6. Վարչական վերահսկողության ֆինանսական հատվածի ապահովում
7. Մարզի համայնքներում աղբահանության վճարների գանձման և սահմանման նկատմամբ վերահսկողության իրականացում և գործընթացի վերաբերյալ տեղեկատվության մշակում և տրամադրում համապատասխան մարմիններին
8. Համայնքների խոշորացման հետ կապված տեղեկատվության մշակում և նախորդ ժամանակաշրջանի տեղեկատվության խոշորացում այն համեմատելի և համադրելի դարձնելու նպատակով:
9. Իրավական ակտերի, գոյությունների նախագծերի կազմում

Վարչության ֆինանսատնտեսագիտական բաժինը տարվա ընթացքում ժամանակին կատարել է ՏԱՊ-ով և այլ հանձնարարականներով իր առջև դրված բոլոր խնդիրները:

Ընդունվել և ամփոփվել են մարզի համայնքների բյուջեները և դրանց կատարման վերաբերյալ ամսական և եռամսյակային հաղորդումները, տարեկան հաշվետվությունները, դրանք մարզպետին ու պետական այլ համապատասխան մարմիններին ներկայացնելու համար կազմվել են անհրաժեշտ տեղեկանքներ, հաշվետվություններ, հաղորդումներ և այլ փաստաթղթեր:

Կազմվել են մարզի, համապատասխան տարածաշրջանների համայնքների բյուջեների կատարման, ՏԻՄ-երի և դրանց ենթակա բյուջետային հիմնարկների աշխատողներին վճարված աշխատավարձերի, ինչպես նաև նախորդ տարիների աշխատավարձերի պարտքերի մարման վերաբերյալ ամենամսյա հաշվետվություններ:

Լոռու մարզի համայնքների բյուջետային հիմնարկներից, այդ թվում մանկապարտեզներից համայնքային բյուջե մուտքագրված գումարների, ՀՈԱԿ-ների թվաքանակի և առևտրային բանկերում բացված հաշվեհամարներում մուտքագրված գումարների, ինչպես նաև համայնքներում աղբահանություն իրականացնող կազմակերպությունների հաշվեհամարներին մուտքագրված գումարների վերաբերյալ և մարզի համայնքների հողի հարկի և գույքահարկի գծով խոշոր պարտավորություններ ունեցող հարկատուների վերաբերյալ հավաքագրվել է ամսեկան տեղեկատվություններ և ներկայացվել Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն:

Մարզի համայնքների խոշորացման արդյունքում 107 համայնքներից ձևավորվեցին 56 համայնքներ, որով պայմանավորված մարզի համայնքների բյուջեների հետ կապված բոլոր վերլուծություններն ու հաշվետվությունները սկսած նոյեմբեր ամսից հաշվարկվել և ներկայացվել են 56 համայնքների կտրվածքով, այսինքն ամբողջ տեղեկատվությունը միավորվել է ինչպես հաշվետու 2017թ. համար, այնպես էլ 2016թ. համար տեղեկատվությունը և հաշվետվությունները համեմատելի և համադրելի դարձնելու նպատակով:

Բաժնի աշխատակիցների կողմից ապահովվել է մարզպետարանի գնումների գործընթացի կազմակերպումն ու ապահովումը, որի շրջանակներում կազմակերպվել է էլեկտրոնային գնումներ և դրանց վերաբերող ամբողջական տեղեկատվությունը տեղադրվել gnomner.am կայքում: Գնումների համակարգողի կողմից մարզային ենթակայության կազմակերպությունների գնումների վերաբերյալ հայտարարություններն ու գնման պայմանագրերը օրենքով սահմանված կարգով տեղադրվել է կայքում:

Գնումներն իրականացվել են տարբեր ընթացակարգերով, որից՝

- բանակցային ընթացակարգ առանց հայտարարության - 45 ընթացակարգ
- բանակցային ընթացակարգ հայտարարելով - 3 ընթացակարգ
- շրջանակային համաձայնագրեր - 5 ընթացակարգ
- պարզեցված ընթացակարգ - 1 ընթացակարգ
- բաց ընթացակարգ - 1 ընթացակարգ
- գնանշման հարցում - 11 ընթացակարգ

- Գնման ընթացակարգերի արդյունքում կնքված բոլոր պայմանագրերը մուտքագրվել են <<GLIENT-TRESUARY>> - <<LSFinanse>> համակարգ և << ֆինանսների նախարարության կողմից ստացել դրական եզրակացություն:

- Սահմանված ձևաչափերով կազմվել է միջնաժամկետ ծախսային ծրագրերում և 2018 թվականի բյուջետային հայտում ընդգրկվող Լոռու մարզպետարանի գնումների անվանացանկը:

- Լոռու մարզպետարանի 2018 թվականի գնումների միասնական անվանացանկը վերջնական տարբերակով սահմանված ժամկետում ներկայացվել է << ֆինանսների նախարարություն:

„Գանձապետական գործառնական օր,, ծրագրի օգնությամբ ամենօրյա օպերատիվ տեղեկատվություն է ստացվել համայնքների բյուջեների մուտքերի վերաբերյալ, կատարվել համապատասխան վերլուծություններ:

Իրականացվել է համայնքների ղեկավարների կողմից ներկայացվող գույքային հարկերի անդորրագրերի և ծանուցագրերի վերաբերյալ հաշվետվությունների և հայտ-պահանջագրերի ընդունում: << ֆինանսների նախարարությունից ստացել ենք 50000 հատ գույքային հարկերի անդորրագրեր , որը համայնքներին բաշխվել է ըստ համապատասխան հայտերի:

2017թ համայնքների կողմից սուբվենցիաների հայտեր չեն ներկայացվել:

Բաժնի աշխատակիցները մասնակցել են համայնքային ծառայության մրցութային և ատեստավորման հանձնաժողովների աշխատանքներին:

Կազմակերպվել իրականացվել է մարզպետարանի հողի հարկի և գույքահարկի տեղեկատվական տվյալների շտեմարանի վարումը, տեղեկատվության մշակումը և համակարգված տեղեկությունները տրամադրումը ՀՀ ՏԿՀՆ: „Վեկտոր Պլյուս“, ՍՊԸ-ի հետ համատեղ կազմակերպվել և իրականացվել է խոշորացված համայնքների բազաների միավորումը, այն համապատասխանեցնելով գործող համայնքների կառուցվածքին: Ընդունվել է պետական բյուջեից համահարթեցման սկզբունքով ՏԻՄ-երին տրամադրվող դոտացիաների ելակետային տվյալները, ամփոփվել ներկայացվել ՀՀ ՏԿՀՆ, ինչպես նաև համայնքներին է տրամադրվել դոտացիաների նախնական տվյալները բյուջեների նախագծերում նախատեսելու նպատակով:

Կազմակերպվել և իրականացվել է մարզի համայնքների բյուջեների եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման համար պահանջվող տեղեկատվության հավաքագրումը, ստուգումը և ամփոփումը ըստ համայնքների, ներկայացվել է ՀՀ ՏԿՀՆ:

Իրականացվել է մարզի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման և կազմման ֆինանսական հատվածի ապահովում և մարզպետին ներկայացվող սոցիալ-տնտեսական հարցերին վերաբերող փաստաթղթերի մասնագիտական (ֆինանսական) քննության իրականացումը, 2017թ-ի ՏԱՊ-ի կազմում և ՏԱՊ-ի մոնիտորինգի ծրագրի մշակումը, ինչպես նաև ՀՀ Լոռու մարզպետի տարեկան հաշվետվության բաժնի հետ կապված նյութերի պատրաստում:

Մարզի բոլոր համայնքների բյուջեները, դրանցում կատարված փոփոխություններն ու համայնքների բյուջեների կատարման վերաբերյալ հաշվետվությունները մշակվել և տրամադրվել են մարզպետարանի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնին մարզպետարանի կայքում տեղադրելու նպատակով:

Կազմակերպվել և անցկացվել է տարբեր ԲՈՒՀ-երի շուրջ 45 ուսանողների ուսումնական պրակտիկան:

Պարբերաբար ըստ տարածաշրջանների քննարկումներ են կազմակերպվել համայնքների եկամուտների հավաքագրման մակարդակը բարձրացնելու ուղղությամբ միջոցառումներ իրականացնելու նպատակով: Քննարկումները անց են կացրել մարզպետը և փոխմարզպետները:

2017թ. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԸՍՏ ՀԱՐԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ

Մարզի համայնքների բյուջեներով 2017թ կտրվածքով նախատեսված մուտքերը ապահովվել են 96.6%-ով կամ նախատեսված 7333.3 մլն. դրամ մուտքերի դիմաց հավաքագրվել է 7086.7 մլն. դրամ, որից վարչական բյուջեի եկամուտները և պաշտոնական տրանսֆերտները փաստացի կազմել են 6406.9 մլն. դրամ, այդ թվում սեփական եկամուտները՝ 1852.8 մլն. դրամ:


(հազար դրամ)

h/h	Եկամուտների անվանումը	2016թ. Բյուջե			2017թ. Բյուջե			2017թ-ի աճը 2016թ-ի նկատմամբ	2017թ-2016թ-ի փաստ. նկատմամբ (%)
		պլան	փաստ.	կատ %	պլան	փաստ.	կատ %		
1	Հողի հարկ	354326.1	295319.0	83.3	357876.1	312926.7	87.4	17607.7	106.0
2	Գույքահարկ	653600.7	701677.6	107.4	711676.9	738979.3	103.8	37301.7	105.3
3	Պետական տուրք	45950.0	41553.7	90.4	45850.0	50950.1	111.1	9396.4	122.6

4	Տեղական տուրք	107918.9	107263.2	99.4	110787.2	116456.8	105.1	9193.6	108.6
5	Գույքի վարձ. վճար	232033.4	213498.5	92.0	217662.3	221675.1	101.8	8176.6	103.8
6	Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ	7075.0	4502.5	63.6	24005.0	21529.2	89.7	17026.8	478.2
7	Տեղական վճարներ	296226.0	254172.0	85.8	335802.0	330598.2	98.5	76426.2	130.1
	որից աղբահանության վճար	239975.0	197888.6	82.5	241956.8	226199.8	93.5	28311.2	114.3
8	Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ	3504.5	2918.9	83.3	4852.4	7254.5	149.5	4335.6	248.5
9	Մուտքեր տույժերից, տուգանքներից	3960.0	2347.4	59.3	2640.0	1315.5	49.8	-1031.9	56.0
10	Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	1500.0	300.0	20.0				-300.0	0.0
11	Այլ եկամուտներ	41101.0	44500.9	108.3	56509.4	51164.5	90.5	6663.6	115.0
12	Պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	4537482.6	4441760.1	97.9	4301461.5	4301461.5	100.0	140298.6	96.8
13	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող այլ դոտացիաներ				230364.9	7677.8	3.3	7677.8	
14	Պետ.բյուջ. պատվիր.լիազ.կատ. միջոց	80969.5	80864.7	99.9	80857.0	80688.4	99.8	-176.3	99.8
15	Պետական բյուջեից համայնքի վարչական բյուջեին տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)	52555.2	54055.6	102.9	170209.4	164806.1	96.8	110750.5	304.9
	ԴԱՀԿ-ով տարված գումարներ բյուջեի վարչական մասից		-8171.3			-552.1		7619.2	6.8
	Ընդամենը վարչ. բյուջեի եկամուտներ	6418202.9	6236562.7	97.2	6650554.1	6406931.6	96.3	170368.8	102.7
16	Տարեսկզբի ազատ մնացորդ	26050.4	26050.4	100.0	29829.7	29829.7	100.0	3779.3	114.5
	Ընդամենը վարչ. բյուջեի մուտքեր	6444253.3	6262613.1	97.2	6680383.8	6436761.3	96.4	174148.1	102.8
1	Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	7051.6	7051.6	100.0	9508.6	8639.2	90.9	1587.6	122.5
2	Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	59212.0	57966.9	97.9	88716.0	86627.3	97.6	28660.4	149.4
3	Հատկացումներ պահուստ. ֆոնդից	77503.9	43050.5	55.5	144662.5	105937.0	73.2	62886.6	246.1
4	Այլ մուտքեր	70.0	70.0	100.0	500.0	500.0	100.0	430.0	714.3
	Ֆոնդային բյուջեի եկամուտներ	143837.5	108138.9	75.2	243387.0	201703.5	82.9	93564.6	186.5
4	Տարեսկզբի ազատ մնացորդ	643268.9	643268.9	100.0	554155.1	554155.1	100.0	-89113.8	86.1
	Ֆոնդային բյուջեի մուտքեր	787106.4	751407.8	95.5	797542.1	755858.6	94.8	4450.8	100.6
	Ընդամենը վարչական բյուջեի սեփական եկամուտներ	1745695.6	1667753.6	95.5	1867661.3	1852849.9	99.2	185096.4	111.1
	Ընդամենը բյուջեի եկամուտներ	6484536.5	6301651.2	97.2	6749278.6	6502698.1	96.3	201046.9	103.2
	Ընդամենը բյուջեի մուտքեր	7153855.8	6970970.5	97.4	7333263.4	7086682.9	96.6	115712.4	101.7

Վարչական բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 96.3%-ով՝ նախորդ տարվա 97.2%-ի դիմաց: Իսկ Ֆոնդային բյուջեի եկամուտների պլանը մարզում կատարվել է 82.9%-ով՝ նախորդ տարվա 75.2%-ի դիմաց:

ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների կատարողականը 2016-2017թթ. կտրվածքով




Համայնքների սեփական եկամուտները 2016թ. կտրվածքով կազմել է 1667.8 մլն դրամ, 2017թ. կտրվածքով կազմել է 1852.8 մլն դրամի դիմաց կամ եկամուտների ինդեքսի աճը 2016թ-ի նկատմամբ կազմել է 111.1%, բացարձակ աճը 2016-ի նկատմամբ՝ 185.1 մլն. դրամ:

Պետք է նշել, որ նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների աճ են գրանցել Ստեփանավանի տարածաշրջանի համայնքներում՝ 114.7%, Գուգարքի տարածաշրջանի համայնքներում՝ 108.9%, Տաշիրի տարածաշրջանի համայնքներում՝ 113%, Սպիտակի տարածաշրջանի համայնքներում՝ 109.9%, Թումանյանի տարածաշրջանի համայնքներում՝ 114.2%:

Եթե դիտարկենք սեփական եկամուտների հավաքագրումը ըստ տարածաշրջանների՝ ապա կտեսնենք, որ եկամուտների գերակշիռ մասը ապահովում է Գուգարքի տարածաշրջանը 45.6%, ապա Թումանյանի տարածաշրջանը 19.7%, Սպիտակի տարածաշրջանը՝ 12.7%, Ստեփանավանի տարածաշրջանը՝ 12.1%, Տաշիրի տարածաշրջանը՝ 9.9%:

2017թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ տարածաշրջանների



2017թ.ին նախորդ տարվա համեմատությամբ սեփական եկամուտների հավաքագրումը նվազել է մարզի 13 համայնքներում (համայնքների 23.2%-ը, այդ թվում՝ Սպիտակում՝ 5 համայնք, Գուգարքում՝ 8 համայնք, ինչպես ցույց է տալիս վերլուծությունը՝ բոլոր խոշորացված

համայնքներում սեփական եկամուտները գերազանցել են նախորդ տարվա միավորված ցուցանիշները:

Սեփական եկամուտների գծով 2017թ. համար նախատեսվել են 1867.7 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 1852.8 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 99.2%, 2018թ. համար նախատեսվել է 2258.7 մլն. դրամ, կամ աճը 2017թ. պլանի նկատմամբ նախատեսվել է 120.9%, փաստացիի նկատմամբ 121.9%: Մարզի 1 բնակչի հաշվով սեփական եկամուտների գծով ցուցանիշը 2017թ. համար կազմում է 8038 դրամ, 2018թ. Համար նախատեսվել է 10216 դրամ:

Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների կատարումը 31.12.2017թ. դրությամբ

Համայնքի անվանումը	մինչև 80%	Համայնքի անվանումը	մինչև 100%	Համայնքի անվանումը	100% և ավելի
Ձորագյուղ	75.9	Գուգարք	97.5	ք.Վանաձոր	102.6
Սարամեջ	74.9	Արջուտ	94.3	Շահումյան	104.6
Սարահարթ	73.8	Ֆիզուլետովո	93.1	Լեռնապատ	105.9
Նոր Խաչակապ	76.0	Ձորագետական	97.9	Բազում	101.7
Սարչապետ	72.1	Վահագնի	84.6	Մարգահովիտ	100.6
5		Վահագնաձոր	94.9	Լերմոնտովո	101.1
		Ազնվաձոր	85.2	Դարպաս	110.6
		Անտառաշեն	96.1	Եղեգնուտ	100.6
		Հալվար	98.2	Դեբետ	114.0
		Քարաբերդ	92.2	Փամբակ	100.6
		Շիրակամուտ	80.3	Անտառամուտ	117.9
		Քարաձոր	89.9	ք.Սպիտակ	106.7
		Սարալանջ	92.3	Հարթագյուղ	107.5
		Գոգարան	86.2	Լուսաղբյուր	105.9
		Խնկոյան	98.1	Լեռնանցք	106.9
		Ղուրսալի	91.4	Կաթնաջուր	101.4
		ք.Տաշիր	94.5	Ծաղկաբեր	112.3
		Մեծավան	90.3	Մեծ Պարնի	103.0
		Ալավերդի	98.4	Արևաշող	114.1
		ք.Ախթալա	87.8	Գեղասար	108.1
		Օձուն	98.7	Շենավան	102.7
		Գյուլագարակ	93.6	Լեռնավան	102.3
		Լոռի Բերդ	89.5	Ջրաշեն	114.2
		23		ք.Թումանյան	106.2
				Դսեղ	100.6
				Շնող	100.0
				Չկալով	100.0
				ք.Ստեփանավան	100.1

28

Վերլուծությունը ցույց է տալիս, որ եթե խոշորացված համայնքների տվյալները միավորենք ապա 2016 թ-ին սեփական եկամուտները մինչև 60% կատարել էին 1 համայնք, 2017 թ-ին այդպիսի համայնք չկա, նույն ժամանակաշրջանում 60-80% կատարում են ապահովել համապատասխանաբար 7 և 5 համայնքներ, 80-100% համապատասխանաբար 26 և 23 համայնքներ, 100%-ից ավել՝ 22 և 28 համայնքներ, այսինքն մինչև 80% սեփական եկամուտներ ունեցող համայնքների թիվը նվազել է 3-ով, 80-100%-ից ավել նվազել՝ 3-ով, իսկ 100%-ից ավել աճել՝ 6-ով: Փոքր համայնքների ցածր կատարողականները մեծ համայնքների ցուցանիշներում փոքր տեսակարար կշիռ ունեն, արդյունքում խոշորացված համայնքների կատարողականներն ավելի բարձր են ստացվում ըստ համայնքների վերլուծություններ կատարելիս:

Եկամուտների հավաքագրման գործընթացում կան բազմաթիվ օբյեկտիվ ու սյուբեկտիվ գործոններ, որոնցից որպես հիմնական կարելի է համարել համայնքի ղեկավարի, աշխատակազմի և ավագանու աշխատանքը: Ուստի և համայնքների խոշորացման


գործընթացում որպես հիմնական գործոն ենթադրվում է համայնքների աշխատակազմերի կադրերի որակական աճը:

Օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառների հետ մեկտեղ նաև անտարբեր և անբավարար աշխատանքի հետևանքով 2017թ.-ին նախորդ տարվա համեմատությամբ զուտ սեփական եկամուտների մուտքերը զգալիորեն պակասել են հատկապես հետևյալ համայնքներում.


(հազար դրամ)

h/h	Համայնքի անվանումը	Փաստացի մուտքեր		2017թ.փաստացի կատ.% 2016թ-ի նկատմամբ
		2016թ.	2017թ.	
1	Արջուտ	5,412.2	4,845.0	89.5
2	Զորագետավան	1,541.0	1,368.3	88.8
3	Եղեգնուտ	2,717.6	2,550.6	93.9
4	Անտառամուտ	2,235.1	2,032.6	90.9
5	Քարաբերդ	2,124.3	1,792.9	84.4
6	Լեռնանցք	5,140.0	4,677.4	91.0
7	Սարամեջ	4,308.5	3,833.6	89.0

2016թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ եկամտատեսակների



2017թ. ՀՀ Լոռու մարզի համայնքների սեփական եկամուտների տեսակարար կշիռը ըստ եկամտատեսակների



2017 թվականին մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտների ընդհանուր ծավալում հողի հարկի փաստացի տեսակարար կշիռը կազմել է 16.9%, գույքահարկինը՝ 39.9%, գույքի վարձակալության վճարները (այդ թվում պահուստային հողերի վարձավճարներ) 12.0%, նախորդ տարվա համապատասխանաբար՝ 17.7%, 42.1% և 12.8-ի դիմաց, ինչը խոսում է այն

մասին, որ 2017թ. սեփական եկամուտների տեսակարար կշռում ավելացել է այլ եկամուտների, մասնավորապես, տեղական վճարների բաժինը, որը պայմանավորված է հիմնականում ծնողական վճարները որպես տեղական վճար համայնքի բյուջեում ներառելով:

2017թ. հողի հարկի 357.9 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել է ընդամենը 312.9 մլն դրամ, կամ 87.4%, (2016թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 106.0%) որը նախորդ տարվա փաստացի մուտքերից ավել է 17.6 մլն. դրամով: Մարզի 1 բնակչի հաշվով հողի հարկի հավաքագրման ցուցանիշը 2017թ. համար կազմում է 1415 դրամ:

Հողի հարկի հավաքագրումը հատկապես ցածր է հետևյալ համայնքներում (մինչև 70%).

հազար դրամ

Հ/Հ	Համայնքի անվանումը	2017թ.		
		պլան	փաստ	%
1	2	3	4	5
1	Վահագնի	2,357.9	1,587.2	67.3
2	Քարաբերդ	297.8	184.9	62.1
3	Ախթալա	11,972.3	6,800.5	56.8
4	Տաշիր	27,996.9	18,762.1	67.0
5	Մեծավան	20,545.4	13,478.8	65.6
6	Սարչապետ	17,210.0	10,719.8	62.3
7	Քարածոր	1,072.0	729.7	68.1
8	Գոգարան	2,677.0	1,607.1	60.0

Հողի հարկի հավաքագրումը հատկապես վատ է Տաշիրի տարածաշրջանում՝ 65.3% , իսկ Ստեփանավանի տարածաշրջաններում 87.4%, Թումանյանի տարածաշրջանում 92.9%, Գուգարքի տարածաշրջանում 96.4%, Սպիտակի տարածաշրջանում 94.3%:


Նույն ժամանակահատվածում հողի հարկի հավաքագրումը նախատեսվածի 80%-ը գերազանցում է 43 համայնքներում, որից 100%-ը 26 համայնքներում:

հազար դրամ

Հ/Հ	Համայնքների անվանումը	2017թ.		
		պլան	փաստ.	%
1	Վանաձոր	27,800.0	28,101.3	101.1
2	Գուգարք	3,670.3	3,670.6	100.0
3	Շահումյան	2,254.9	2,368.8	105.1
4	Լեռնապատ	3,850.6	3,853.3	100.1
5	Մարգահովիտ	7,060.1	7,061.8	100.0
6	Դարպաս	1,392.8	1,403.1	100.7
7	Զորագետավան	63.6	64.3	101.1
8	Եղեգնուտ	1,043.9	1,044.4	100.0
9	Փամբակ	181.4	182.0	100.3
10	Անտառամուտ	788.5	861.0	109.2
11	Վահագնաձոր	302.1	346.6	114.7
12	Անտառաշեն	357.7	399.0	111.6
13	Թումանյան	9,909.5	10,196.7	102.9
14	Դսեղ	7,584.1	7,596.4	100.2
15	Շնող	10,426.9	11,361.3	109.0
16	Զկալով	1,146.5	1,177.7	102.7
17	Օձուն	29,450.9	29,464.5	100.0
18	Սպիտակ	4,200.0	4,901.3	116.7
19	Լուսաղբյուր	3,388.5	3,390.9	100.1
20	Լեռնանցք	1,558.4	1,581.4	101.5
21	Ծաղկաբեր	3,873.3	3,882.1	100.2
22	Մեծ Պարմի	12,996.5	13,087.2	100.7
23	Գեղասար	2,244.5	2,248.3	100.2
24	Լեռնավան	1,213.7	1,245.8	102.6
25	Ջրաշեն	5,353.6	5,356.9	100.1
26	Ղուրսալի	1,087.3	1,093.0	100.5

Հողի հարկի հավաքագրումը 2016թ. համեմատությամբ նվազել է 20 համայնքներում, կամ համայնքների 35.7%, այդ թվում՝ Թումանյանի տարածաշրջանում՝ 1, Գուգարքի տարածաշրջանում՝ 8, Տաշիրի և Ստեփանավանի տարածաշրջաններում՝ 2 ական, Սպիտակի տարածաշրջանում՝ 7 համայնքներ:

Վերջին 5 տարիների ընթացքում հողի հարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



ՀՀ Լոռու մարզի համայնքների հողի հարկի
հավաքագրումը 2013-2017թթ. (մլն. դրամ)

Գույքահարկի գծով 2017թ. համար նախատեսվել է 711.7 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 739.0 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 103.8%, (2016թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 105.3%) նախորդ տարվանից ավելի է հավաքագրված 37.3 մլն. դրամ:

Մարզի 1 բնակչի հաշվով գույքահարկի հավաքագրման ցուցանիշը 2017թ. համար կազմում է 3342 դրամ:

Գույքահարկի հավաքագրման գործընթացը լավ է ընթացել մարզի կտրվածքով կազմելով՝ 103.8%, Գուգարքի տարածաշրջանում՝ 103.4%, Սպիտակի տարածաշրջանում՝ 108.3%, Թումանյանի տարածաշրջանում՝ 100.4% , Տաշիրի տարածաշրջանում՝ 112.3% և Ստեփանավանի տարածաշրջանում՝ 99.3%:

Գույքահարկի գանձման բարձր մակարդակ է գրանցվել (ավելի քան 80%) մարզի 51 համայնքներում, 100%-ի սահմանագիծը հատել են 31 համայնքներ:


Գույքահարկի հավաքագրումը հատկապես ցածր է հետևյալ համայնքներում (մինչև 80%).

հազար դրամ

Դ/Դ	Համայնքների անվանումը	2017թ.		
		պլան	փաստ.	%
1	Արցուն	1,682.1	1,136.0	67.5
2	Ազնվածոր	569.1	380.0	66.8
3	Շիրակամուտ	3,785.4	2,335.2	61.7
4	Սարամեջ	2,496.7	1,885.7	75.5
5	Սարահարթ	3,874.2	3,086.2	79.7


Նախորդ տարվա համեմատությամբ գույքահարկի ծավալները ըստ տարածաշրջանների աճել են Սպիտակում՝ 111.2%, Ստեփանավանում՝ 110.3%, Գուգարքում՝ 106.0%, նվազել՝ Թումանյանում՝ 98.9%, Տաշիրում՝ 98.7%, :

Վերջին 5 տարիների ընթացքում գույքահարկի հավաքագրման մակարդակն ունի այսպիսի տեսք.



**ՀՀ Լոռու մարզի համայնքների գույքահարկի
հավաքագրումը 2013-17թթ. (մլն. դրամ)**

2017թ. ընթացքում համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների 217.7 մլն. դրամ պլանի դիմաց հավաքագրվել 221.7 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 101.8%, (2016թ.ի համեմատությամբ հավաքագրումը կազմել է 103.8%, որը նախորդ տարվանից ավել է հավաքագրված 8.2 մլն. դրամ: Մարզի 1 բնակչի հաշվով այս ցուցանիշը 2017թ. համար կազմում է 1002 դրամ:



**ՀՀ Լոռու մարզի համայնքների հողի և գույքի վարձակալության վճարների
հավաքագրումը 2013-17թթ. (հազ. դրամ)**

Տեղական տուրքերի հավաքագրման մակարդակը կազմել է 105.1%, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 99.4%-ի դիմաց, փաստացի հավաքագրումը աճել է 9.2 մլն. դրամով: 2017թ. ընթացքում տեղական տուրքերի գծով մուտք չեն ունեցել 4 համայնք:

Պետական տուրքի գանձումը կազմել է 111.1%, փաստացի հավաքագրումը նախորդ տարվա համեմատությամբ աճել է 9.4 մլն. դրամով:

„Մաքուր Հայաստան,, ծրագրի կատարումն ապահովելու նպատակով մարզի համայնքներում աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքները ինքնաձախսաձածկման եղանակով կատարելու և անհրաժեշտ մակարդակի գանձումներ ապահովելու նպատակով մարզի բոլոր համայնքներում, բացի շատ փոքր համայնքներից, առաջարկվել է նախատեսել աղբահանության գծով վարձավճարներ և ապահովել դրանց գանձումը: Ըստ համայնքների

կողմից ներկայացված 2018թ. բյուջեների, աղբահանության գծով վարձավճարները նախատեսվել է 327.3 մլն. դրամ , 2017թ. Նախատեսված 241.9 մլն. դրամի կամ փաստացի 226.2 մլն. դրամի դիմաց: Նախատեսվել է աճ 2017թ. պլանի նկատմամբ 35.3 %, իսկ փաստացիի նկատմամբ 44.7 %:

2017թ. պետական բյուջեից մարզի համայնքներին նախատեսվել է 4301461.5 հազ.դրամ ֆինանսական համահարթեցման դոտացիա, որը հաշվետու ժամանակաշրջանի կտրվածքով ֆինանսավորվել է 100%-ով:

Մարզի համայնքներում բնակչության մեկ շնչի հաշվով տեղական հարկային բեռի վերլուծություն է կատարվել, որի արդյունքում ցածր հարկային բեռ նախատեսած համայնքների հետ տարվում է աշխատանքներ

- հողի հարկի և գույքահարկի բազաների ճշգրտումների ուղղությամբ
- Սպիտակի և Գուգարքի տարածաշրջանի համայնքներում հարկային բեռի ավելացման և մարզային միջին ցուցանիշին մոտեցնելու ուղղությամբ
- բյուջեում դրված պլանային ցուցանիշների և հաշվարկային թվերի համապատասխանության հսկողության ուժեղացման ուղղությամբ:

Մարզի համայնքների վարչական բյուջեների ծախսերը 2017թ-ի համար նախատեսվել են 6680.4 մլն. դրամ, 01.01.2018թ. դրությամբ փաստացի վճարվել է 6157.0 մլն. դրամ, կամ 92.2 %, ֆոնդային բյուջեի ծախսերը նախատեսվել 797.5 մլն. դրամ, որից վճարվել է 515.7 մլն. դրամ, կամ ծախսերը ֆինանսավորվել է 64.7%-ով:

հազար դրամ					
Հ/Հ	Ծախսերի անվանումը	Բյուջեով նախատեսված	փաստացի վճարում	կատարման %	Տեսակարար կշիռը %
1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	2458625.8	2328404.1	94.7	37.8
2	ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	2080.0	864.0	41.5	0.0
3	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԳ,ԱՆՎՏԱՆԳ. ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ				
4	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	206595.7	188463.3	91.2	3.1
5	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	643218.1	625873.0	97.3	10.2
	այդ թվում աղբահանություն	541357.2	528880.7	97.7	
6	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	325722.5	298835.9	91.7	4.9
7	ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ՝	2490.0	1660.0	66.7	0.0
8	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	584982.4	540282.0	92.4	8.8
9	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	1961160.6	1866696.4	95.2	30.3
10	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	223946.8	198593.9	88.7	3.2
11	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	271562.0	107317.0	39.5	1.7
	Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում*	144662.5	105937.0	73.2	1.7
Ընդամենը վարչական բյուջեի ծախսեր		6680383.8	6156989.6	92.2	93.8

1	ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ	249280.5	184066.0	73.8	35.7
2	ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	110231.4	1576.9	1.4	0.3
3	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ	116086.7	103567.3	89.2	20.1
	այդ թվում աղբահանություն	33180.8	27274.9	82.2	
4	ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ	196897.8	145049.4	73.7	28.1
5	ՀԱՆԳԻՍՏ, ՄՇԱԿՈՒՅԹ և ԿՐՈՆ	44368.8	21869.3	49.3	4.2
6	ԿՐԹՈՒԹՅՈՒՆ	80529.7	59645.7	74.1	11.6
7	ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ	147.1	0.0	0.0	0.0
Ընդամենը ֆոնդային բյուջե		797542.1	515774.6	64.7	7.9
ԸՆԴԱՄԵՆԸ ԲՅՈՒՋԵ		7333263.4	6566827.2	89.5	

ՀՀ Լոռու մարզի համայնքների բյուջեների ծախսերը 2017թ. համար նախատեսվել են 7333.3 մլն դրամ, փաստացի կատարումը կազմել է 6566.8 մլն. դրամ, կամ կատարողականը կազմել է 89.5%: 2017թ. համար 1 բնակչի հաշվով ծախսերի միջին մարզային ցուցանիշը կազմում է 29700 դրամ, Համայնքների բյուջեների վարչական մասի կատարված փաստացի 6157.0 մլն. դրամ ծախսի մեջ համայնքապետարանների պահպանման ծախսերը կազմում են 2328.4 մլն. դրամ կամ 37.8%, 1 շնչին ընկնող ապարատի պահպանման ծախսի միջին մարզային ցուցանիշը կազմում է 10531 դրամ:

Մարզի 56 համայնքների 2017թ.բյուջեների վարչական ծախսերի մեջ աշխատավարձերի գծով ծախսերը կազմել է 1874.5 մլն դրամ, որը կազմում է ծախսերի մոտ 30.4%-ը, կամ ապարատի պահպանման ծախսերի 80.5%-ը: Համայնքներում վարչական ծախսերի ընդհանուր ծավալում բարձր է մնում աշխատանքի վարձատրության հոդվածով կատարվող ծախսերի տեսակարար կշիռը:

Մարզի համայնքների բյուջեների աշխատավարձի գծով պարտքերը 2017թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 81634.0 հազար դրամ, որից՝ Վանաձոր համայնք՝ 81080.0 հազ. դրամ, Ազնվաձոր՝ 247.0 հազ. դրամ, Ձորագյուղ՝ 307.0 հազ. դրամ:

Ըստ ոլորտների ծախսերի մեջ մեծ տեսակարար կշիռ ունեն կրթության բնագավառին ուղղված ծախսերը՝ 30.3%, այդ թվում նախադպրոցական կրթությանն ուղղված ծախսերը՝ 52.5%, կամ բյուջեների վարչական մասի 15.9%-ը: Ընդ որում 2017թ. մարզում համայնքային բյուջեներից ֆինանսավորվող նախադպրոցական կրթության հիմնարկների թիվը 69 է, որոնք սպասարկում են 26 համայնքների, այս համայնքներում 1 երեխայի կտրվածքով տարեկան միջին ծախսը կազմում է 234.3 հազ. դրամ կամ տատանվում է 119.2 հազ. դրամից մինչև 438.1 հազ. դրամ, ընդ որում ամենաբարձրը Դարպաս համայնքում է 438.1 հազ. դրամ, Գուգարքում՝ 424.5 հազ. դրամ, Եղեգնուտում 396.3 հազ. դրամ Մեծավանում՝ 366.3 հազ. դրամ, Վանաձորում՝ 215.7 հազ. դրամ, Թումանյանում՝ 253.7 հազ. դրամ, Սպիտակում՝ 293.5 հազ. դրամ, Օծունում՝ 183.8 հազ. դրամ, Մարգահովիտում 207.5 հազ. դրամ, Ստեփանավանում՝ 287.3 հազ. դրամ, Ալավերդիում՝ 264.6 հազ. դրամ, Ախթալայում՝ 206.8 հազ. դրամ, Տաշիրում՝ 196.7 հազ. դրամ:

Աղբահանության գծով համայնքային բյուջեներով որպես ընթացիկ ծախս 2017թ. նախատեսվել է 541.4 մլն. դրամ, փաստացի կատարվել է 528.9 մլն. դրամ, 2018թ. բյուջեներով նախատեսվել է 623.9 մլն. դրամ, կամ ծախսի աճ է նախատեսվել 15.1% պլանի նկատմամբ և

18% փաստացի նկատմամբ: 2017թ. փաստացի ծախսածածկումը կազմել է 42.8%, 2018թ. համար նախատեսվել է 52.2%:

Աղբահանության գծով մարզում խոշորացումից հետո ծախսեր իրականացրել են 37 համայնքներում, որի համար 2017թ. ծախսվել է 556.2 մլն. դրամ, որից վարչական բյուջեով՝ 528.9 մլն. դրամ, ֆոնդային բյուջեով՝ 27.3 մլն. դրամ: Աղբահանության գծով ընթացիկ ծախսը կազմել է վարչական բյուջեի ծախսերի ընդհանուր գումարի 8.6%ը, կամ մարզում 1 բնակչի հաշվով ծախսվող միջին գումարը կազմում է 2392 դրամ:

Աղբահանության համար վարչական բյուջեով կատարված 2017թ. փաստացի ծախսը Վանաձորում կազմել է 259.7 մլն. դրամ (կատարողականը՝ 98.3%, տեսակարար կշիռը՝ 12.1%), Ալավերդիում՝ 78.0 մլն. դրամ (կատարողականը՝ 99.9%, տեսակարար կշիռը՝ 14.7%), Ստեփանավանում՝ 52.4 մլն. դրամ (կատարողականը՝ 100.0%, տեսակարար կշիռը՝ 12.6%), Սպիտակում՝ 25.7 մլն. դրամ (կատարողականը՝ 97.1%, տեսակարար կշիռը՝ 7.1%), Ախթալայում՝ 14.2 մլն. դրամ (կատարողականը՝ 93.7%, տեսակարար կշիռը՝ 8.6%) և Թումանյանում՝ 15.0 մլն. դրամ (կատարողականը՝ 100.0%, տեսակարար կշիռը՝ 14.0%):

Սոցիալական պաշտպանության բնագավառում մարզի համայնքներում ծախսը 2017թ. կազմել է 198.6 մլն. դրամ կամ վարչական ծախսերի 3.2%-ը: Մարզի 56 համայնքներից սոցիալական ծրագրեր (հիմնականում սոց. օգնությունների տեսքով) իրականացվել են 54 համայնքներում, բացառություն են կազմել Ձորագետավան և Անտառաշեն համայնքները, այս համայնքներում գումարների սղության պատճառով բյուջեով նախատեսվել է միայն ապարատի պահպանման ծախսեր:

Ըստ համայնքների ղեկավարների սեփական եկամուտների հավաքագրման աշխատանքների գնահատման համակարգի, որում կարևորվել է հիմնական եկամտատեսակների հավաքագրման մակարդակը և բյուջեի եկամտային մասում դրանց նշանակությունը համայնքները դասակարգվել են: Որի արդյունքում ստացվել է համայնքների սեփական եկամուտների հավաքագրման միջին հավասարակշռված գնահատական հետևյալ դասակարգումով.

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ՎԻՆՆԻ 80%

• Անտառաշեն	68.37
• Հալլավար	56.71
• Քարաբերդ	79.19
• Նոր Խաչակապ	78.34
• Սարականջ	71.16
• Ղուրսալի	71.72

ԲԱՑԹՈՂՈՒՄՆԵՐՈՎ 80-90%

• Արջուտ	82.88
• Վահագնաձոր	85.54
• Ազնվաձոր	87.65
• Սարամեջ	80.02
• Սարահարթ	82.85
• Ալավերդի	87.77

ԿԱՅՈՒՆ 90-100%

• Լեռնապատ	98.53
• Լեւոնոտովո	93.20
• Դարպաս	95.14
• Ջորագյուղ	91.30
• Ջորագետական	99.42
• Դեբետ	95.99
• Անտառամուտ	97.43
• ք. Սպիտակ	97.89
• Լեռնանցք	99.02
• Մեծ Պարնի	93.19
• Արևաշող	92.27
• Քարաձոր	92.65
• Շենական	97.46
• Գոգարան	94.08
• Լեռնական	97.18
• ք. Տաշիր	92.92
• Սարչապետ	97.86
• ք. Թումանյան	96.15
• Չկալով	99.44
• Օձուն	99.12
• ք. Ստեփանավան	98.09
• Գյուլագարակ	90.52
• Լոռի Բերդ	97.56

ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ 100% և ավել

• ք. Վանաձոր	101.44
• Գուգարք	100.95
• Շահումյան	109.04
• Բազում	108.73
• Մարգահովիտ	103.42
• Ֆիոլետովո	101.35
• Եղեգնուտ	110.16
• Փամբակ	106.83
• Վահագնի	213.84
• Հարթագյուղ	119.86
• Լուսաղբյուր	101.45
• Կաթնաջուր	116.47
• Ծաղկաբեր	107.81
• Շիրակամուտ	103.16
• Գեղասար	110.48
• Խնկոյան	101.62
• Ջրաշեն	106.37
• Մեծական	107.17
• ք. Ախթալա	105.16
• Դսեղ	108.56
• Շնող	115.95

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԲԱԺԻՆ

Հաշվապահական հաշվառման բաժինը իրականացնում է հետևյալ գործառույթները՝

- մարզպետարանի ապարատի ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, հաշվապահական հաշվառման վարում, հաշվետվությունների կազմում և ներկայացում.
- Կրթության ոլորտի կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, ֆինանսավորում, վերահսկողություն, համակարգում, ամփոփ հաշվետվությունների կազմում և ներկայացում.
- Առողջապահական կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության ոլորտի վերահսկողություն, համակարգում, ամփոփ հաշվետվությունների կազմում և ներկայացում.
- Մարզպետարանի և ենթակա կազմակերպությունների սոցիալական փաթեթի գծով անհրաժեշտ աշխատանքների իրականացում.
- Այլ ընթացիկ աշխատանքներ

Մարզպետարանի ապարատի ֆինանսատնտեսական գործունեության ապահովում, հաշվապահական հաշվառման վարում

Իրականացվում են հետևյալ գործառույթները՝

1. Մարզպետարանի պահպանման ծախսերի նախահաշիվների կազմում և մուտքագրում.
2. Մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառման վարում
3. Ֆինանսական հաշվետվությունների կազմում և ներկայացում.
4. Միջնաժամկետ ծախսային ծրագրի և բյուջետային հայտի կազմում, ներկայացում.
5. Իրավական ակտերի, գրությունների նախագծերի կազմում.
6. Սոցիալական փաթեթի ծրագրով փաստաթղթային ապահովում և ֆինանսավորման իրականացում.

Մարզպետարանի պահպանման և մարզպետարանի միջոցով իրականացվող տարբեր ծրագրերի ֆինանսավորման համար 2016 թվականի **8.490.085.5** հազ. դրամի դիմաց 2017 թվականին ֆինանսավորումը կազմել է **8.619.300.1** հազ. դրամ, կամ ավելացել է 129.214.1 հազ. դրամով(աճը՝ 1.5 տոկոս):

2017 թվականին նախատեսված 8748145.8 հազ. դրամի դիմաց փաստացի ծախսը կազմել է 8619300.1 հազ. դրամ, կամ տնտեսումը կազմել է 128845.7 հազ. դրամ, այդ թվում՝ ապարատի պահպանման ծախսերից՝ 4474.6 հազ. դրամ, պահուստային ֆոնդից՝ 99871.7 հազ. դրամ, սոցիալական փաթեթի հատկացված գումարներից՝ 24104.5 հազ. դրամ, այլ ծրագրերով՝ 395.1 հազ. դրամ:


2015-2017թթ. ՀՀ պետական բյուջեով նախատեսված միջոցներից մարզպետարանին և մարզային ենթակայության կազմակերպություններին ֆինանսավորված ֆինանսավորված գումարների վերաբերյալ

(հազ. դրամ)


	2015թ	2016թ	2017թ նախատեսվ ած	2017թ փաստացի
ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմի պահպանում	571620.4	568168.9	576261.3	571786.7
Հանրակրթական ուսուցում	6235951.4	6353292.6	6467637.9	6467637.9
Ներառական կրթություն	281184.0	356994.5	242968.6	242967.8
Հատուկ կրթություն	115149.8	108566.8	62349.8	62349.8
Նախադպրոցական (կրթություն)	41128.6	43051.3	52774.1	52770.9
Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների դասագրքերի վարձավճարների փոխհատուցում	8311.8	162.1	0	0
Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային նվագարանների գծով ուսուցման վարձավճարի փոխհատուցում	38943.5	38943.5	38943.5	38943.5
Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում	278.1	504.8	788.1	788.1
Կրթական հիմնարկների եւ օբյեկտների շինարարություն	144290.3	18353.9	39177.3	39177.3
Թանգարանային ծառայություններ	16157.6	16263.0	16164.1	16164.1
Մշակութային միջոցառումների իրականացում	3542.3	3542.3	3542.3	3542.3
ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից	848128.5	194687.9	781630.3	681758.6
Մարզային նշանակության ա/ճ- ների ընթացիկ ձմեռային պահպանում և շահագործում	71400.0	74864.7	89670.0	89669.9
Պետական նշանակության ա/ճ- ների և) հիմնանորոգում	270262.6	0	0	0
Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում	291616.3	295941.6	322056.0	297951.5
Այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում	3600.0	3870.0	3405.0	3270.0
Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին	283102.1	162057.9	0	0
Մշակութային օբյեկտների հիմնանորոգում	0	12388.0	0	0
Երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանով ապահովում*	0	225000.0	25500.0	25500.0
Ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած մանկավարժներին հավելավճարի տրամադրում	6463.6	13431.7	24758.0	24502.2
Աջակցություն համայնքներին	0	0	15000,0	15000,0

/Սարամեջ համայնքին հողամասերի ոռոգման համար /				
Արտասահմանյան գործուղում	0	0	519,5	519,5
Ընդամենը	9231130.9	8490085.5	8748145.8	8619300.1

2015-2017թթ. ՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԱԾ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ



Նախորդ տարվա համեմատ նվազել են՝ կրթության ոլորտին հատկացված գումարը՝ 4163.7 հազ. դրամով, երկրաշարժի հետևանքով անօթևան մնացած ընտանիքների բնակարանով ապահովում ծրագրով հատկացված գումարները՝ 199500.0 հազ. դրամով, այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին՝ 162057.9 հազ. դրամով, մշակույթային օբյեկտների հիմնանորոգում՝ 12388.0 հազ. դրամով, թանգարանային ծառայություններ՝ 98.9 հազ. դրամով, այլընտրանքային աշխատանքային ծառայողներին դրամական բավարարում՝ 600.0 հազ. դրամ: Մնացած ծրագրերով ծախսերը պահպանվել կամ ավելացել են: ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված գումարներից ծախսը 2016 թվականի 194687.9 հազ. դրամի փոխարեն 2017թվականին կազմել է 681758.6 հազ. դրամ, կամ ավելացել է 487070.7 հազ. դրամով: Պահուստային ֆոնդից կատարված 681758.6 հազ. դրամից կապիտալ ծախսերը կազմել են 566953.3 հազ. դրամը(83.1%), ընթացիկ ծախսեր՝ 114805.3 հազ. դրամ(16.9%):



2016թվականի նկատմամբ 2017 թվականին մարզպետարանի ապարատի պահպանման ծախսերը աճել են շուրջ 3617.8 հազ. դրամով, որը հիմնականում պայմանավորված է աշխատավարձերի բնականոն աճով: 2017թ. նախատեսված 576261.3 հազ. դրամի փոխարեն փաստացի ծախսը կազմել է 571786.7 հազ. դրամ, կամ տնտեսումը կազմել է 4474.6 հազ. դրամ: Առավել մեծ չափով տնտեսումներն առաջացել են «Էներգետիկ ծառայություններ»՝ 1334.2 հազ. դրամ, «Կապի ծառայություններ»՝ 420.1 հազ. դրամ և «Տրանսպորտային նյութեր»՝ 1779.6 հազ. դրամ հոդվածներով:

2017թվականին նախորդ տարվա նկատմամբ ավելացել է աշխատավարձի ֆոնդը՝ 1.1 %-ով, պետական ծառայողների պարգևատրման ֆոնդը՝ 1.0 %-ով: Աշխատավարձի բնականոն աճի հետևանքով ավելացել է աշխատողների միջին աշխատավարձը՝ 2016թվականի 257.0 հազ. դրամի դիմաց 2017 թվականին կազմելով 259.0 հազ. դրամ:

Օգնության խնդրանքով մարզպետարան դիմած քաղաքացիներին օժանդակելու նպատակով բաժնի կողմից ներկայացվել է մարզպետի թվով 106 որոշման նախագիծ, շուրջ 1098 քաղաքացիների տրամադրվել է սոցիալական օգնություն բյուջեի «այլ նպաստներ» հոդվածով նախատեսված 30.0 մլն. դրամի շրջանակներում:


Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի կատարման նկատմամբ հսկողության 2017թ. ծրագրի շրջանակներում ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից ՀՀ Լոռու մարզպետարանում կատարվել է ստուգումներ, արձանագրված խախտումների և թերությունների վերացման և հետագայում բացառման վերաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ: Ստուգմամբ մարզպետարանի հաշվապահական հաշվառման աշխատանքներում էական խախտումներ և թերություններ չեն արձանագրվել, մարզպետարանին հատկացված գումարները ծախսվել են օրենքով սահմանված կարգով, կատարված հաշվարկների, ֆինասավորումների և վճարումների գծով խախտումներ չեն

արձանագրվել, տարեվերջին ժամկետանց դեբիտորական և կրեդիտորական պարտքեր չեն առաջացել:

Հանրակրթական դպրոցներում իրականացված ստուգումների հետևանքով մի շարք դպրոցներում արձանագրվել է ըստ աշակերտ թվի ֆինանսավորված գումարների տարբերություն, ինչի հետևանքով արձանագրվել է պետական բյուջե վերականգնման ենթակա **5362.5** հազ. դրամը գումար: Վերականգնելու վերաբերյալ տրվել է համապատասխան հանձնարարական, ավել ֆինանսավորված գումարները մինչև տարեվերջ դպրոցների կողմից ամբողջությամբ վերականգնվել է:

ՀՀ Լոռու մարզպետարանին ՀՀ կառավարության 2013թ. հունիսի 27-ի N 661-Ն և 2013թ. հուլիսի 18-ի N 781-Ն որոշումներով նվազագույն աշխատավարձի, գազի և էլեկտրաէներգիայի սակագների բարձրացում պայմանավորված 2013թ. պետական բյուջեից հատկացված փոխհատուցման գումարների ծախսման նպատակայնության ու հիմնավորվածության վերաբերյալ վարչության կողմից իրականացվել են համապատասխան ուսումնասիրություններ, համաձայն որի մարզի համայնքներից և հանրակրթական կազմակերպություններից պետական բյուջե պետք է վերականգնել **3928.3** հազ. դրամը: Վերականգնելու վերաբերյալ տրվել է համապատասխան հանձնարարական, ավել փոխհատուցված գումարները ամբողջությամբ վերականգնվել է:

ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՊԱՐԱՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԾԱԽՍԵՐ



Կրթության ոլորտ

Լոռու մարզպետարանի ենթակայության 149 հանրակրթական դպրոցների, մեկ հատուկ դպրոցի և մեկ թանգարանի ֆինանսատնտեսական գործունեության սպասարկման, համակարգման և վերահսկողություն շրջանակներում իրականացվել են հետևյալ գործառույթները.

1. Հանրակրթական ծառայությունների գնման պայմանագրերի կնքում.
2. Պայմանագրերի քաղվածքների և ժամանակացույցերի կազմում և մուտքագրում էլեկտրոնային client-treasury համակարգ.

3. Պահպանման ծախսերի նախահաշիվների ընդունում, ճշգրտում, ստուգում և ամփոփում .
4. Ամենամսյա ֆինանսավորման կատարում.
5. Ամսական, եռամսյակային և տարեկան ֆինանսական հաշվետվությունների ընդունում, ստուգում, ամփոփում և ներկայացում ՀՀ ֆինանսների նախարարություն.
6. Աշակերտների թվի փոփոխության հետ կապված բյուջեի ճշտում, համաձայնագրերի, վճարման ժամանակացույցերի կազմում, հաստատում և մուտքագրում client-treasury համակարգ.
7. 2018-2020թթ միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2018 թվականի բյուջետային հայտի կրթության ոլորտի ֆինանսավորման պլանային ցուցանիշների հաշվարկ և ներկայացում ՀՀ ՖՆ.
8. Հանրակրթական ուսումնական հաստատությունների տարիֆիկացիոն մատյանների ստուգում և աշխատակիցների աշխատանքի վարձատրության հարցերով համապատասխան մեթոդական օգնության տրամադրում.
9. Գույքագրման մատյանների ընդունում.


2017 թվականին 2016 թվականի նկատմամբ նվազել է մարզպետարանի ենթակայության կրթական հաստատությունների հանրակրթական, ներառական, հատուկ և նախադպրոցական ուսուցում ծրագրերով ֆինանսավորման ընդհանուր ծավալները շուրջ 0.5 տոկոսով՝ 2016 թվականի 6861905.2 հազ. դրամի փոխարեն 2017 թվականին կազմելով 6825726.4 հազ. դրամ, ինչը պայմանավորված է հիմնականում 2017 թվականի սեպտեմբերի 1-ից համընդհանուր ներառական կրթության անցմամբ, ինչի արդյունքում դադարեցվեց հատուկ ուսուցմամբ ծրագրով ֆինանսավորումները:

Դպրոցների ֆինանսավորումների չափերը հաշվարկվում են ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ կրթության նախարարի համատեղ հրամանով սահմանված կարգով: Հաշվարկի արդյունքում դպրոցների մի մասը հայտնվում են ֆինանսական վատ վիճակում, կատարվում են համապատասխան վերլուծություններ, որի արդյունքում կատարվում են ֆինանսական միջոցների վերաբաշխումներ: 2017 թվականին ֆինանսական վիճակը բարելավելու նպատակով վերաբաշխման արդյունքում գումարներ են հատկացվել թվով 46 դպրոցի՝ շուրջ 45.0 մլն դրամի չափով:


2018 թվականին պակասել է դպրոցների ֆինանսավորման չափերը, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ ֆինանսների նախարարի և ՀՀ կրթության նախարարի համատեղ հրամանով 2018 թվականի համար ֆինանսավորման բանաձևում ոչ ուսուցչական անձնակազմի աշխատավարձի ֆոնդի նվազեցմամբ, համաձայն որի աշակերտի թվաքանակից պայմանավորված մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցի համար նախատեսված է մինչև 7.5 հաստիք, 101-ից մինչև 300 աշակերտի համար՝ մինչև 9.5 հաստիք, 301 և ավել աշակերտ ունեցող դպրոցների համար՝ 13.0 հաստիք, կամ նախորդ տարվա նկատմամբ նվազեցվել է մինչև 100 աշակերտ ունեցող դպրոցի համար՝ 1.5 դրույք, 101-ից ավել աշակերտ ունեցող դպրոցի համար՝ 2.5 դրույք:

Կրթական հաստատություններում միջին աշխատավարձերի էական փոփոխություններ չեն կատարվել, ուսուցիչների միջին դրույքաչափը կազմում է 112.0 հազ. դրամ, տնօրեններինը՝ 206.0 հազ. դրամ, ուսումնաօժանդակ աշխատողներինը՝ 80.0 հազ. դրամ:

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ



ՀԱՏՈՒԿ, ՆԱԽԱԴԴՐՈՑԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԱՌԱԿԱՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ



2017 թվականին 2016 թվականի նկատմամբ աճել են «Մանկավարժների և դպրոցական երեխաների տրանսպորտային ծախսերի փոխհատուցում» և «Ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած մանկավարժներին հավելավճարի տրամադրում» ծրագրերով ֆինանսավորումները: 2017 թվականին ավելի քան 1.8 անգամ ավելացել է ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած մանկավարժների թվաքանակը, ինչի հետևանքով 2017 թվականին ֆինանսավորումը կազմել է 24758.0 հազ. դրամ, նախորդ տարվա 13431.7 հազ. դրամի դիմաց: Մարզում ատեստավորման միջոցով որակավորման տարակարգ ստացած մանկավարժների թվաքանակը այլ մարզերի նկատմամբ թվականին բարձր է և գերազանցում է մի քանի անգամ:

Վերջին տարիներին մարզում մեծ աշխատանքներ են տարվում SS ոլորտի զարգացման ուղղությամբ: Կրթության ոլորտում կարևոր է գերժամանակակից տեխնոլոգիաներից օգտվելու հմտությունների զարգացումը և կիրառումը: Ծրագրի շրջանակներում թվով 17 հանրակրթական դպրոցներում բացվել են ՍՄԱՐԹ դասարաններ, որոնք հագեցված են գերժամանակակից տեխնիկայով: ՍՄԱՐԹ դասարանների բացման համար դպրոցների գումարներից ծախսվել է 116037.3 հազ. դրամ, որը հիմնականում ուղղվել է դասասենյակների վերանորոգման և գերժամանակակից տեխնիկայի ու գույքի ձեռքբերմանը: Մեկ ՍՄԱՐԹ դասարանի համար ծախսը կազմում է միջինը 6825.78 հազ. դրամ:

Բաժնի աշխատակիցների կողմից իրականացվում է նաև թանգարանի, հատուկ դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության ապահովումը և վերահսկողությունը, ինչպես նաև մարզի լեռնային, հեռավոր, սահմանամերձ բնակավայրերի դպրոցներին մանկավարժական կադրերով ապահովման և ատեստավորման միջոցով որակավորում ստացած ուսուցիչներին հավելավճարների տրամադրում ծրագրերի ֆինանսատնտեսական ապահովումը:

Առողջապահության ոլորտ

Առողջապահության ոլորտում մարզպետարանի ենթակայության գործող 14 ՓԲԸ-ների, 12 ՊՈԱԿ-ների և 5 համայնքային առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության գնահատման և վերահսկման առումով իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Ընդունվել, ստուգվել և հաստատվել են 2017 թվականի նախահաշիվները և դրանցում կատարվող փոփոխությունները.
2. Ընդունվել, ստուգվել և ամփոփվել են 2016 թվականի տարեկան և 2017 թվականի ֆինանսատնտեսական հաշվետվությունները.
3. Ընդունվել, ստուգվել և ամփոփվել են 2016 թվականի տարեկան և 2017 թ կիսամյակի մոնիտորինգի ցուցանիշների մասին հաշվետվությունները.
4. Կազմվել են 2018-2020 թթ. միջնաժամկետ հեռանկարում ՀՀ պետական բյուջե շահաբաժինների գծով վճարման ենթական տարեկան գումարների կանխատեսումների մասին հաշվետվություն, ինչպես նաև կատարվել են 2017 թվականի գործունեության արդյունքում ստացված շահույթից պետական բյուջե վճարման ենթակա շահաբաժինների հաշվարկ և ապահովվել է սահմանված ժամկետում դրանց վճարման գործընթացը.
5. Մարզպետարանի համակարգի առևտրային կազմակերպությունների ֆինանսական ցուցանիշների վատթարացման և աշխատանքի արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվել է վերլուծություն և ներկայացվել ՀՀ ԿԱ պետական գույքի կառավարման վարչություն.
6. Ընդունվել է առողջապահական ընկերությունների եկամուտների և ծախսերի մասին ամենամսյա հաշվետվություններ.

2017 թվականին 2016 թվականի նկատմամբ ոլորտի ընկերություններում նվազել է պետական պատվերի գումարները՝ 1.8 տոկոսով, վճարովի ծառայություններից ստացվող մուտքերը ավելացել են 15.6 տոկոսով, պետական բյուջե վճարվող շահաբաժինների ծավալը ավելացել է 71.9 տոկոսով: Վճարովի ծառայության տեսակարար կշիռը ընդամենը եկամուտների մեջ կազմում է 2016 թվականին՝ 12.2 %, 2017 թվականին՝ 14.0%, կամ աճը

կազմում է 1.8 %: Կատարված ծախսերի մեջ աշխատավարձերի տեսակարար կշիռը կազմում է 73.2 տոկոս, դեղորայք՝ 17 տոկոս, կոմունալ և տնտեսական ծախսեր՝ 7.7 տոկոս, այլ ծախսեր՝ 1.8 տոկոս, կապիտալ վերանորոգման ծախսեր՝ 0.3 տոկոս:

	2015թ.	2016թ.	2017թ.
1.Ընդամենը՝ եկամուտներ	4282666.0	4312695.3	4337454.1
որից՝			
-պետական պատվեր	3686834.8	3717572.1	3648079.7
- վճարովի ծառայություններ և համավճարներ	523776.6	526067.9	608255.7
-Այլ մուտքեր	72054.6	69055.3	81118.7
2. Վճարված շահաբաժին	17008.2	11693.3	20099.2


Ձեռնարկվում են միջոցներ կազմակերպությունների ֆինանսական վիճակը բարելավելու ուղղությամբ, կատարվում են համապատասխան վերլուծություններ, ներկայացվում են առաջարկություններ: Եթե կրթական հաստատություններ չունեն ժամկետանց կրեդիտորական պարտքեր, ապա նույնը չենք կարող ասել առողջապահական կազմակերպությունների մասին: Ֆինանսական վիճակի բարելավման նպատակով առողջացման ծրագիր տարեսկզբին ներկայացվել է Վանաձորի բժշկական կենտրոնի կողմից, համաձայն որի նախատեսվում է վճարովի ծառայությունների հաշվին նվազեցնել կուտակված պարտքերը: Ծրագիրը ամբողջությամբ չի իրականացվել, վճարովի ծառայությունների մուտքերը նախորդ տարվա նկատմամբ ավելացել են 5.4 մլն. դրամով, կազմելով՝ 246.2 մլն. դրամ: Տարեվերջին կրեդիտորական պարտքերը նվազել են շուրջ 4.0 մլն. դրամ, կազմելով մոտ 72.0 մլն. դրամ:

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ֆինանսաբյուջետային վերահսկողության տեսչության կողմից 2016 թվականին իրականացված ստուգումների արդյունքում «Վանաձորի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերությունում արձանագրվել է պետական բյուջե վերականգնման ենթակա 52.6 մլն. դրամի խախտում: Հաշվի առնելով կազմակերպության ծանր ֆինանսական վիճակը բաժնի կողմից կազմվել և ներկայացվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ համապատասխան հիմնավորումներով: ՀՀ կառավարության կողմից ըստ ներկայացված նախագծի 2017 թվականի ապրիլի 20-ին ընդունվել է N 415 – Ա որոշում, համաձայն որի ելնելով ֆինանսական ծանր վիճակից թույլատրվել է վերականգնման ենթակա գումարները մարել մինչև 2018 թվականի դեկտեմբերի 1-ը և դադարեցնել ուշացման համար հաշվարկվող տոկոսների/տույժերի/ հաշվարկը: Մարզպետի 2017 թվականի ապրիլի 27-ի թիվ 147-Ա որոշմամբ հաստատվել է մարման ժամանակացույց, որը ներկայացվել է կազմակերպության տնօրենին: Վճարումները կատարվում են ըստ ժամանակացույցի, վճարումների գործընթացը պարբերաբար վերահսկվում է բաժնի կողմից:


2017թ. մայիսից պետական պատվերի շրջանակում մատուցվող ծառայությունները ֆինանսավորվում են էլեկտրոնային առողջապահական համակարգում (e-health) իրականացված գրանցումների համաձայն: Համակարգի նպատակն է ապահովել քաղաքացիների բժշկական հաստատությունների այցելությունների գրանցումը, մատուցված բժշկական ծառայությունների, դրանց ֆինանսավորման, դեղերի դուրս գրման, բժշկական գրանցումների, հիվանդության պատմագրերի էլեկտրոնային վարումը: Համակարգի ներդրումը թույլ է տալիս ավտոմատացնել գործավարությունը և փաստաթղթաշրջանառությունը, բժշկին ապահովել քաղաքացու հիվանդության պատմության առցանց հասանելիությունը, իսկ մյուս

կողմից՝ ՀՀ քաղաքացիներին տրամադրել բժշկական հաստատություններ այցերի առցանց պլանավորումը, ինչպես նաև սեփական հիվանդության պատմության դիտարկման հնարավորությունները:

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՎԵՐ ԵՎ ՎՃԱՐՈՎԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՐՄԻՑ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ ՎՃԱՐՎԱԾ ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ



Առողջապահական կազմակերպությունների աշխատակիցների թիվը կազմում է 2059, որը նախորդ տարվա նկատմամբ նվազել է 34-ով: Մեկ հիվանդի բուժման մեկ օրվա արժեքը 2016թ.-ի 19166.5 հազ. դրամի փոխարեն 2017 թվականին կազմում է 17807.8 հազ. դրամ, կամ նվազել է 1358.7 հազ. դրամով, միջին աշխատավարձը աճել է 1.8 տոկոսով, կազմելով 133100 դրամ:

ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՄԻՋԻՆ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ 2015-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

	2015թ.	2016թ.	2017թ.	2017թ.-ը 2016թ-ի նկատմամբ /%-ով/
աշխատակիցների միջին ամսական աշխատավարձ (դրամ)	128300.0	130700	133100	101.8
տնօրենի միջին ամսական աշխատավարձը (դրամ)	346476.7	398157.1	380108	95.4
բժիշկների միջին ամսական աշխատավարձը (դրամ)	242062.0	220502	214061	97.1
միջին բուժանձնակազմի միջին ամսական աշխատավարձը (դրամ)	89999.1	83124.6	80906.3	97.3
կրտսեր բուժանձնակազմի միջին ամսական աշխատավարձը (դրամ)	71292.3	69163.7	72038.9	104.1
այլ անձնակազմի միջին ամսական աշխատավարձը (դրամ)	103230.7	96786.1	110261.3	113.9

Պետական աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովման ծրագրի իրականացում

Սույն ծրագրով 2017 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

1. Լոռու մարզպետարանի աշխատակազմի սոցիալական փաթեթի շահառու հանդիսացող աշխատակիցների անհատական տվյալների բազայում/էլեկտրոնային շտեմարան/ կատարվել են համապատասխան փոփոխություններ.
2. Ընդունվել, հաստատվել և ամփոփվել են մարզպետարանի և ենթակա ՊՈԱԿ-ների ծախսերի նախահաշիվները.
3. Իրավական ակտերում պարբերաբար կատարվող փոփոխություններով պայմանավորված մեթոդական և տեղեկատվական օգնություն է տրամադրվել համակարգի ՊՈԱԿ-ներին.
4. Առողջապահության նախարարությունից ստացվել են անվճար բժշկական օգնության և սպասարկման հավաստագրեր, որը հատկացվել է մարզպետարանի աշխատակազմի և մարզպետարանի ենթակայության պետական ոչ առևտրային կազմակերպությունների 2017թվականին շահառու դարձած աշխատակիցներին.
5. Մարզպետարանի և ենթակա կազմակերպությունների շահառուների վերաբերյալ տրամադրվել են պահանջվող տեղեկատվություններ, տարվել են աշխատանքներ նույնականացման քարտերի ձեռքբերման աշխատանքներում:


Սոցիալական փաթեթի ֆինանսավորման գումարները 2016 թվականի նկատմամբ 2017 թվականին ավելացել են 0.7 տոկոսով՝ 295941.6 հազ. դրամի փոխարեն կազմելով 297951.5 հազ. դրամ, որը հիմնականում պայմանավորված է շահառուների թվի 0.5 տոկոս ավելացմամբ:

	2015թ.	2016թ.	2017 թ.	/հազ. դրամ/ 2017թ.-ին 2016թ.-ի նկատմամբ
Պետական բյուջեից հատկացված գումարներ	291616.3	295941.6	297951.5	100.7
Շահառուների թիվ	4680	4716	4741	100.5


2017 թվականին սոցիալական փաթեթը կարգավորող իրավական ակտերում կատարվել են մի շարք փոփոխություններ, որի վերաբերյալ մարզպետարանի ենթակա կազմակերպություններին ցուցաբերվել է մեթոդական օգնություն, վերահսկվել է նրանց կողմից կատարվող աշխատանքների գործընթացը: Փոփոխությունների արդյունքում շրջանառությունից հանվել է նախկինում շահառուներին տրամադրվող հավաստագրերը և ընդհանուր շահառուների հաշվառումը իրականացվում է էլեկտրոնային շտեմարանների միջոցով: Շտեմարաններում ավելացվել են նոր դաշտեր, պատրադիր պայման է շահառու հեռախոսահամարի և էլեկտրոնային փոստի անվանման լրացումը: 2018 թվականի հունվարի 1-ից շահառուների համար պարտադիր պայման է նույնականացման քարտի առկայությունը, ձեռնարկվել են համապատասխան աշխատանքներ մարզպետարանի և նրա ենթակա կազմակերպություններում ապահովել նույնականացման քարտերի առկայությունը:

2017 թվականի հոկտեմբերի 1-ից շահառուների բժշկական օգնությունն ու սպասարկումը կազմակերպվում և ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության և առողջության ապահովագրության ծառայություններ մատուցող ընկերությունների միջև կնքված առողջության ապահովագրության պայմանագրերի միջոցով: Առողջապահական կազմակերպությունների կողմից շահառուներին մատուցված բժշկական օգնության և սպասարկման հատուցումն իրականացվում է ապահովագրական ընկերությունների կողմից:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՓԱԹԵԹԻ ԳԾՈՎ ՓԱՍՏԱՑԻ ԿԱՏԱՐՎԱԾ ԾԱԽՍ



ՀԱՀԱՌՈՒՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՇԱՐԺ



Համայնքներում իրականացվող իրավական և մասնագիտական հսկողություն

2017թվականի աշխատանքային ծրագրի շրջանակներում իրավական և մասնագիտական հսկողություն է իրականացվել ՀՀ Լոռու մարզի 35 համայնքներում: Հսկողության արդյունքում ֆինանսական բնագավառի վերաբերյալ կազմվել են համապատասխան արձանագրություններ:

Արձանագրությունները քննարկվել են մարզպետարանում և արձանագրված խախտումների և թերությունների վերացման վարաբերյալ տրվել են համապատասխան հանձնարարականներ:

Առաջարկություններ

1. Համայնքների բյուջեներին համաձայնություն տալ համապատասխան փոխմարզպետների կողմից ղեկավարված աշխատանքային խմբի միջոցով:
2. Հանրակրթական դպրոցների տարիֆիկացիաների հաստատման համար ստեղծել աշխատանքային խումբ, որտեղ ներկայացված կլինեն ֆինանսական և կրթության վարչությունների աշխատակիցներ և ընդհանուր քննարկմանը կհաստատվի տարիֆիկացիոն մատյանները համապատասխան ժամանակաշրջանի համար:
3. Աղբահանության հետ կապված աշխատանքների ամբողջ ֆինանսական և վերլուծական մասը որպես գործառույթ ավելացնել վարչության գործառույթներին աշխատակիցների պաշտոնի անձնագրերում:
4. Մշտական հավաքագրման ցածր մակարդակ ունեցող համայնքների սուբվենցիայի հայտերը մերժել մարզպետարանում:
5. Ֆինանսական և առողջապահության վարչությունների աշխատակիցներից ստեղծել աշխատանքային խումբ և ըստ հիմնարկների ուսումնասիրել վճարովի ծառայությունների բարելավման ուղիները և ծախսերի նպատակահարմարությունը: